ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԴԱԼԱՐԻԿԻ
ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРСКАЯ ОБЛАСТЬ
ОБЩИНА
с. ДАЛАРИК

գ. Դալարիկ
Հեռ. ( 0 233), 6-13-06

с. Даларик Тел. (0 233) 6-13-06

No 0222

« 20 » հունիս 2016թ.

ՀՀ Արմավիրի մարզպետ
պրն Ա. Ղահրամանյանին

Հարգարժան պարոն մարզպետ.

Ձեզ է ներկայացվում Արմավիրի մարզի Դալարիկ գյուղական համայնքի 2016 թվականի հունիսի 20-ին կայացած թիվ 06 նիստի թիվ 16-Ն որոշման քաղվածքը , հատված 1 ,հատված 2 , հատված 3, հատված 6 և փոփոխված նախահաշիվները:

Առդիր 47 (Քառասունյոթ ) թերթ:

Համայնքի ղեկավար Պ. Սաղաթելյան

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ 112.88/7060-16
«23» 06 2016թ.

# Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք

Արմավիրի մարզի Ղալարիկ գյուղական համայնքի ավագանու 20.06.2016 թվականին կայացած թիվ 06 նիստի արձանագրության:

2016 թվականի հունիսի 20-ին տեղի ունեցավ Ղալարիկի գյուղական համայնքի ավագանու թիվ 06 նիստը՝ ավագանու 9 անդամների մասնակցությամբ:

Նախագահությամբ՝ Պ. Սաղաթելյանի

Քարտուղարությամբ՝ Ս. Շահբազյանի

1. Օրակարգ. 2. Ղալարիկ գյուղական համայնքի 2015 թվականի դեկտեմբերի 22-ի « Ղալարիկ գյուղական համայնքի 2016 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 40-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին հարցը :

2. Լսեցին. 2. Ղալարիկ գյուղական համայնքի 2015 թվականի դեկտեմբերի 22-ի « Ղալարիկ գյուղական համայնքի 2016 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 40-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին (Զեկ.համայնքի ղեկավար՝ Պ.Սաղաթելյան):

Ղեկավարվելով «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ կետի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, հիմք ընդունելով 18.03.2016թ. «Դրամաշնորհի հատկացման» թիվ 31 և 25.01.2016թ. «Սուբվենցիայի հատկացման» թիվ 15 պայմանագրերը և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկը.

Որոշում թիվ 16- Ն

20.06.2016թ.

Համայնքի բյուջեի եկամտային մասում կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Համայնքի բյուջեի եկամտային մասի 1256 «Պետական բյուջեից համայնքի վարչական բյուջեին տրամադրվող այլ դոտացիաներ» տողում նախատեսել 995,5 հազ.դրամ:
2. Համայնքի բյուջեի եկամտային մասի 1257 «Պետական բյուջեից համայնքի վարչական բյուջեին տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ) » տողում նախատեսել 533,5 հազ.դրամ:

Համայնքի բյուջեի ծախսային մասում կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Համայնքի վարչական բյուջեի 01/1/1 հատվածի 4111 հոդվածն ավելացնել 195,5 հազ.դրամ:
2. Համայնքի վարչական բյուջեի 01/1/1 հատվածի 4212 հոդվածն ավելացնել 800,0 հազ դրամ:
3. Համայնքի վարչական բյուջեի 01/1/1 հատվածի 4234 հոդվածը պակասեցնել 29,0 հազ.դրամ:
4. Համայնքի վարչական բյուջեի 01/1/1 հատվածի 4241 հոդվածն ավելացնել 29,0 հազ.դրամ:
5. Համայնքի վարչական բյուջեի 09/5/1 հատվածի 4637 հոդվածն ավելացնել 533,5 հազ.դրամ:

Նիստի նախագահ՝ համայնքի ղեկավար Պ. Սաղաթելյան

Նիստի քարտուղար՝ աշխ-ի քարտուղար Ս. Շահբազյան

Իսկականի հետ ճիշտ է՝

Աշխ-ի քարտուղար Ս. Շահբազյան